անցած էր։ Մեր հարաւն Գլիճ յետուկի շղթայն, որոյ հարաւն գտնուած Անդափ գաւառակի լեռներն, որոց վերայէն եւ Սիփանայ մեծ լեռն և Ալատաղի ի հարաւ-արեւմուտս խոնարհած լեռնաշղթայն, որ մեր արեւելեան հարաւն կընկնի և կը բաժանէ զԽամուր (ծաղկոտն) յԱրճիշոյ եւն։

Մեր բուն նպատակն էր մասնաւոր ակնարկ մի ձգել Թոփրագ-գալէի քաւշանի վերան, որ կայր Խաչլու և Խոփուզ գետակաց միջավայրն. ուր և մենք կանգնած ենք, մեր աջ և ձախ կողմերէն ի հարաւ կը հոսին։

Քաւշանիս դաշտային մասը կը տարածուի գիւղաքաղաքէս ի հարաւ մինչև Միրանկներ, որ բերդիս կը պատկանի և փոքրիկ մի քրդական գիւղ է և որոյ յարեւմուտս Վարաստ, որ մասամբ ճահճային վայր մէ ուր կան գեղեցիկ գոյնզգոյն ծաղկօք զարդարուած մարգագետիններ։

Մեր կեցած բլրակէց արեւմտեան հարաւ կը հոսի Շահկօլի Ջուրն, Խոփուզի Ջրոյն կը խառնուի. իսկ ի հարաւ յարեւելս կը հոսի նաև մի ջուր որ Չիչխան գետ անունով գերեզմանատան ½ ժամ յարևելից անցնելով դաշտի մէջ Խաչլուայ գետակին կը միանայ։

Այս ջուրն թէև փոքր, սակայն ընթացքին վերայ կակուղ հողի և թոյլ ժայռերու պատահելով խիստ խոր անդունդներ կազմած է։

Մեր կանգնած լերան արեւելեան ստորոտն, մերձ Խաչլու գետակին կայ մի փոքրիկ ձորակ. այս ձորակի մէջ կան քանի սառն աղբիւրներ. ձորակի երկայնութեան վերայ կան 25-ի չափ հինաւուրց մնացած ուռի ծառներ, որ մի կարգի վերայ շարուած են. այս ծառներն նուիրական են, որոց մարդ չմերձենար։